

Մարգպետը պատվոգրեր է հանձնել մի շարք բուժաշխատողների

Աշխատանքային տարին ամփոփելուց առաջ Կոտայքի մարգպետ Ռոմանոս Պետրոսյանը հարկ է համարել հանդիպել նաև մարգպին 4 բժշկական կենտրոնների և Աբովյանի ծննդատան աշխատակիցների հետ, խոսել ներկա իրավիճակի մասին և մատնանշել առաջիկա անելիքները:

Մարգպետն արժևորել է բժշկական ոլորտի մասնագետների արդյունավետ աշխատանքը՝ համարելով այս ոլորտը կարևորագույններից մեկը հանրային անվտանգության տեսանկյունից: «Անհրաժեշտ է, որ ձևավորված նոր իրողություններում յուրաքանչյուրս մեր տեղում և մեր կոչմանը համապատասխան՝ դրսևորենք առավելագույն պատասխանատվություն, իրականացնենք նոր որակի աշխատանք և փոփոխությունը սկսենք ինքներս մեզանից: Այլևս փաստ է, որ կառավարման նոր մշակույթ դրսևորելու և քաղաքական կամք արտահայտելու պարագայում դրական տեղաշարժերն անխուսափելի են, իսկ կյանքի կարևորագույն ոլորտներում, ինչպիսին առողջապահությունն է, այդ տեղաշարժերն արդեն իսկ ակնհայտ են».-բուժաշխատողների հետ հանդիպմանն ասել է Ռոմանոս Պետրոսյանը:

Իր խոսքում մարգպետն ընդգծել է, որ պետական կառավարման գերխնդիրն այսօր այդ համակարգում աշխատող՝ հատկապես առողջապահական ոլորտի մասնագետների կյանքի որակի փոփոխության նախադրյալները ստեղծելն է, իսկ նրանք էլ իրենց տեղերում պետք է գերխնդիր համարեն մեր հասարակության առողջության պահպանման նոր մոտեցման, նոր մշակույթի դրսևորումը:

Աբովյանի ծննդատան և բժշկական կենտրոնի, Չարենցավանի, Հրազդանի և Եղվարդի «Նաիրի» բժշկական կենտրոնների մի շարք աշխատակիցներին Ռոմանոս Պետրոսյանը հանձնել է պատվոգրեր՝ անմնացորդ նվիրում պահանջող պատասխանատու աշխատանքում

բարձր մասնագիտական հմտությունների ցուցաբերելու համար՝
միաժամանակ ընդգծելով, որ սա ամենևին չի նսեմացնում ուրիշների
վաստակը. մարգպետը բարձր է գնահատել ցանկացած մասնագետի
ունեցած ներդրումը ոլորտում լավագույն արդյունքը ստեղծելու
ուղղությամբ: